3 ԹԵՄԱ

Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. II–I դդ.

Դաս 21 Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը, հիմնադրումը

Գիտեք, որ...

- *Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում սելևկյան զորքերի թիվը կրկնակի գերազանցում էր հռոմեական զորքին և ուներ 50 մարտական փղեր: Սակայն կարգապահության բացակայության պատճառով սելևկյան բանակը պարտություն կրեց:*

- *Ըստ Հյուբշմանի՝ Արտաշեսի և Զարեհի օրոք Հայաստանն իր մեջ ընդգրկում էր Մեծ Հայքի 15 նահանգից 13-ը:*

- *Անտիոքոս III-ը իր արշավանքն սկսել է Ծոփքի թագավորությունից, որտեղ Քսերքսեսը շարունակեց մնալ որպես Ծոփքի թագավոր՝ ամուսնանալով Անտիոքոսի քրոջ՝ Անտիոքիսի հետ:*

Զարեհ Երվանդունի

Ասքն ասում է, որ Ծոփքի Զարեհ թագավորը եղել է անմրցելի նժույգավար: Առանց իր սևուկ նժույգի, նա ոչ մի ըմպանակ գինի չի խմել: Ըմպանակը մոտեցնում էր նժույգի ռունգներին, որն ասես հոտ էր քաշում, և եթե գինին թունավորված լիներ, անմիջապես խրխնջում էր: Այդ է պատճառը, որ ժամանակակիցների համար խրատանի էր դարձել Զարեհի սիրած խոսքը.

– Իմ նժույգի խրխինջը հավատարմության նշան է:

Դաս 22-23 Արտաշես I-ի պետականակերտ և միավորիչ գործունեությունը

Գիտեք, որ...

- *Արտաշես I-ը և Սաթենիկ թագուհին ունեցել են վեց որդի՝ Արտավազդ, Վրույր, Մաժան, Զարեհ, Տիրան, Տիգրան: Նրանցից երկուսը՝ Արտա-վազդը, Տիրանը (Տիգրան I) հաջորդաբար թագավորել են հորից հետո:*

- *Արտաշես I-ը հայոց քրմապետ է նշանակել իր որդի Մաժանին:*

- *Արտաշես I-ի հայտնաբերված շուրջ 20 սահմանաքարը լիովին համապա-տասխանում են Մ. Խորենացու նկարագրած քարերին, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է պատմահոր գրած պատմության ճշմարտացիությունը:*

- *Ժողովրդական հին վեպի համաձայն, Արտաշես I-ի դագաղը, թագը և զենքերը ոսկեղեն էին, իսկ գահույքը, անկողինը և պատմուճանը՝ ոսկեթել բեհեզից:*

- *Արտաշեսը սիրում էր Վանա լճի գեղածիծաղ ափերը և շինում է այնտեղ Արտամետ քաղաքը, որտեղ Սաթենիկ թագուհու համար կառուցում է աշնանային պալատ՝ այն զարդարելով պարտեզներով, ճեմուղիներով ու ծաղկապտաններով:*

Լրացուցիչ նյութեր

Արտաշեսի խնդությունը

Ասում են՝ Արտաշատ մայրաքաղաքն օղակող պարիսպների կառուցումն ավարտելուց հետո Արտաշեսը մեծ խնջույք է կազմակերպել, որի ժամանակ մարդիկ գինու գավաթներն իրար են զարկել ու ասել՝ Ար-տա-շա-շատ, Ար-տա-շա-շատ, այսինքն՝ Արտաշեսի ուրախություն կամ խնդություն, Արտաշեսն ու իր կառուցած մայրաքաղաքը թող միշտ ուրախության օրեր ապրեն: Ահա այդպես Ար-տա-շա-շատ, Ար-տա-շա-շատ ասելով, քաղաքը կոչվեց Արտաշաշատ: Հետագայում այդ անունը սեղմվել ու դարձել է Արտաշատ:

Արտաշես և Սաթենիկ

Խորենացու մոտ պահպանված այս զրույցը պատմում է, որ այսօրվա օսերի նախնիները՝ ալանները, ներխուժում են Հայաստան: Արտաշեսը հաղթում է ալանական զորքին և գերի վերցնում ալանների պատանի արքայազնին: Ալանների թագավորը բանակցություններ է սկսում՝ պատանուն ազատելու համար, բայց ապարդյուն: Այդ ժամանակ մեծ գետի ափ է դուրս գալիս ալանաց թագավորի աղջիկը՝ գեղանի Սաթենիկը, ով կանչելով հայոց թագավորին, թարգմանի միջոցով խնդրում է ազատել իր եղբորը: Արտաշեսն առաջին հայացքից սիրահարվում է Սաթենիկին, որոշում է փախցնել նրան:

Հին ժամանակներում առևանգումն ամուսնության օրինական ձև էր: Արտաշեսը հեծնում է իր սև գեղեցիկ ձին, արծվի նման անցնում գետը, հանում է կարմիր կաշվից շինած պարանը, որը ծայրին ոսկե օղ ուներ, նետում է ալանաց օրիորդի մեջքին և ցավեցնելով նրա փափուկ մեջքը, նրան հասցնում է իր բանակը: Սրան հաջորդում է հարսանիքը:

Շքեղ էր հարսանիքը հայոց երկրում. «Ոսկե անձրև էր գալիս Արտաշեսի փեսայության ժամանակ, - ասվում է վիպերգում,- մարգարիտ էր անձրևում Սաթենիկի հարսնության ժամանակ»: Հայոց մեջ սովորություն էր, որ թագավորն ու թագուհին հարսանիքի ժամանակ ոսկե դրամ ու մարգարիտ էին ցանում պալատի դռանը հավաքված հանդիսականների մեջ:

Դաս 24 Տիգրան II Մեծը և Հայկական աշխարհակալ տերության ստեղծումը

Գիտեք, որ...

- *Երբ Տիգրան Մեծն Անտիոքում գահ բարձրացավ, սելևկյան մայրաքաղաքն ուներ շուրջ 500 հազար բնակչություն: Այստեղ հայոց թագավորի պատկերով հատվում են ոսկե և արծաթե դրամներ:*

- *Ք.ծ.ա. 72–71 թթ. սահմանագծին, Սպարտակի ապստամբությանն աջակցելու համար, Տիգրան Մեծը հեծելազոր է ուղարկել Իտալիա, որը ռազմական դրվագներից մեկում վճռական դեր խաղալուց հետո պարտվել է:*

- *Փյունիկիայի քաղաքներն ի նշան երախտագիտության, իրենց քաղաքային տոմարն սկսում են հաշվել Ք.ծ.ա. 81 թվականից, երբ Տիգրան Մեծը դրանց ինքնավարության իրավունք շնորհեց:*

- *Միհրդատ VI-ի դուստր Կլեոպատրան, ում հետ ամուսնացավ 46-ամյա Տիգրան Մեծը, ընդամենը 16 տարեկան էր:*

Լրացուցիչ նյութեր

Թող հավերժի Հայքը

Մի անգամ հույն գրող Մետրոդորոս Սկեպսացին, ով ապրում էր հայոց արքունիքում, դիմում է Տիգրան Մեծին և ասում.

Արքայից արքա, հայկական նժույգների խրխնջյունը քո փառքն ավելի հեռու տարան, քան Մասիսի կատարից բացվող տեսածիրները: Ասվածները բարեհաճ եղան քո հանդեպ և այս աշխարհում դու հասար ամեն ինչի: Ինչ կուզենայիր, որ հավերժեր քեզանից հետո՝ քո աշխարհացունց հաղթությունների փառաբանությունն ու ասվածների բարյացակամությունը, թե գանձալեցուն քո ամրոցները:

Այդ ամենի փոխարեն կուզենայի, որ ինձնից հետո հավերժեր Հայքը,– պատասխանում է արքայից արքան:

Դաս 25 Հայկական աշխարհակալ տերության սահմանները, տարածքը, բնակչությունը, կառավարման համակարգը և բանակը

Գիտեք, որ...

- *Հռոմեացիները Տիգրանակերտն անվանել են Մարտիրուպոլիս, արաբները՝ Մայաֆարկին, իսկ հայերը հաճախ անվանել են Նփրկերտ:*
- *Տիգրանակերտը գտնվում էր երեք կարևոր ճանապարհների խաչմերուկում: Դրանցից մեկը քաղաքը միացնում էր Դարեհ I-ի կառուցած «Արքայական ճանապարհի» հետ, մյուսը՝ Տիգրանի կառուցած «Արքունի պողոտան» միմյանց հետ էր կապում Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը, իսկ երրորդը՝ Սասունի լեռնային շրջաններով գնում էր Արածանիի հովիտ և առավելապես համարվում էր ռազմական ճանապարհ:*
- *Հայկական նետ ու աղեղների մասին Դիոն Կասիոսը Արածանիի ճակատամարտի կապակցությամբ գրում է, որ հռոմեացի զինվորների «վերքերը ծանր էին և դժվար բուժելի, քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր: Դրանց ծայրերն այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշելու դեպքում արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ»:*

Լրացուցիչ նյութեր

Տիգրան Մեծը զվարճանում է

Մի անգամ նորակառույց Տիգրանակերտում շատակերների մրցույթ է կազմակերպվում: Արքայից արքային զվարճացնելու համար այստեղ էին հավաքվել Հայքի բոլոր կողմերի որկրամոլները: Մեկն ասում է, թե կարող է տասը հավ ուտել՝ ոսկորներն էլ հետը, մյուսը՝ երկու խաշած գառ, երրորդը՝ խորոված մի եղջերու, չորրորդը՝ մի տիկ գինի խմել: Մեկն էլ ասաց, որ պատրաստ է ուտել 12 կլորակ մեծ հաց:

Այս մեկը չեղավ,– զայրացավ արքայից արքան, – մարդ կարող է ամեն տեսակ ուտելիքով ու հեղուկով լցնել իր ստամոքսը, բայց հացով գերլցնելը հանցագործություն է: Հացով մարդը պետք է հագեցնի միայն իր օրվա քաղցը: Չափավորությունն ամենից շատ պիտի երևա հենց այս բանում: Հացը կարասում են ամբարում, այլ ոչ թե մարդկային ստամոքսում:

Արքայից արքա Տիգրան Մեծը՝ շրջապատված 4 վասալ թագավորներով, նկարիչ՝ Ջ. Ֆուզարո

Դաս 26 Հայոց պետությանը սպառնացող մարտահրավերները. Արտաշատի պայմանագիրը

Գիտեք, որ...

- *Հռոմեական զորավար Պոմպեոսը Տիգրան Մեծին դիտում էր որպես սիրիական թագավորության վերջին արքա՝ ճանաչելով նրա թագավորելու օրինականությունը:*
- *Պոմպեոսը Ք.ծ.ա. 65 թ. Բոսֆորում պատսպարված Միհրդատից՝ որպես խաղաղ բանակցությունների պայման, պահանջեց Տիգրանի նման գնալ իր մոտ, սակայն պոնտացին հրաժարվեց, ասելով. «Ես կմնամ Միհրդատ»:*
- *Տիգրան Մեծը համոզվելով, որ Տիգրան Կրտսերին խրախուսում է Միհրդատ VI-ը, որոշում է սպանել նրան: Նա Միհրդատի գլխի համար խոստանում է հարյուր տաղանդ:*
- *Տիգրանակերտի ճակատամարտի նախօրյակին հռոմեական բանակի մասին Տիգրանն ասել է. «Եթե նրանք եկել են որպես դեսպաններ՝ շատ են, իսկ եթե որպես զինվորներ՝ քիչ են»:*

Լրացուցիչ նյութեր

Տիգրանի հուսահատությունը

Տիգրանակերտի ճակատամարտից հետո Տիգրան Մեծը փախուստի է դիմում: Փախուստի միջոցին նա վերցնում է գլխի խույրը և արտասվելով տալիս իր որդուն ու պատվիրում նրան ուրիշ ճանապարհով փախչել՝ իր անձն ազատելու համար: Որդին չի համարձակվում խույրն իր գլխին դնել և տալիս է պահելու իր հավատարիմ սպասավորին, սակայն նա գերի է ընկնում խույրով, ինչը Լուկուլլոսի համար դառնում է հաղթանակի նշան:

Նահանջի ճանապարհին Տիգրանը հանդիպում է Միհրդատին, ով նրան դուրս է բերում հուսահատ վիճակից: Պոնտացին իջնում է ձիուց և սկսում է մխիթարել ծերունի թագավորին՝ համարելով այդ պարտությունը մեծ դժբախտություն երկուսի համար:

Դեռ ամեն ինչ կորած չէր և նրանք ձեռնամուխ են լինում նոր բանակ կազմելուն: Միհրդատը, չնայած իր ծեր հասակին, մեծ աշխուժությամբ սկսում է գործել՝ աջակցելով Տիգրանին:

Տիգրան Մեծը և որդիները

Տիգրանը չափազանց երկար է թագավորում և նրա որդիների համար դա մի դժբախտություն էր, որ ծերունին շուտ չէր ուզում մեռնել, որ հնարավորություն տա իրենց ևս թագավորելու: Նա Կլեոպատրայից ուներ երեք որդի, ովքեր թշնամիներ են դառնում հոր համար: Ավագ որդին՝ Զարեհը, մեծատոհմիկների հետ մի դավադրություն է կազմակերպում՝ իր հորը գահընկեց անելու համար: Դավակիցները, իրենց ձեռնարկումը գաղտնի պահելու համար, երդման ծես են կատարում՝ խմում են իրենց աջ ձեռքից հանած արյունը: Շուտով դավադրությունը բացվում է և հոր ու որդու միջև կռիվ է սկսվում, որի ժամանակ Զարեհը սպանվում է:

Երկրորդ որդին, ում անունը պատմությունը չի պահել, ուրիշ առիթից է օգտվում՝ գահը հափշտակելու համար: Մի անգամ Տիգրան Մեծը նրա հետ որսի է գնում: Մի ինչ-որ պատճառով նա ձիուց ընկնում է և ուշագնաց լինում: Որդին շտապում է նրա խույրն իր գլխին դնել և սուրը կապել իր մեջքին, մինչդեռ երրորդ որդին, ով նույնպես Տիգրան էր կոչվում, մնում է հոր մոտ և խնամում նրան: Տիգրանը ուշքի գալով, բռնում է ըմբոստ որդուն և գլխատել տալիս նրան:

Ամենից չարանենգը, պարզվում է, երրորդ որդին՝ հենց այս Տիգրանն էր: Նա ևս ապստամբում է հոր դեմ, բայց պարտություն է կրում ու փախչում նախ՝ Պարթևստան, ապա՝ անցնում Պոմպեոսի կողմը:

Լուկուլլոսի դեսպան Ապպիոս Կլավդիոսը Տիգրան Մեծի մոտ, նկարիչ՝ Բ. Պինելլի

Տիգրան II-ի կանանոցի և գանձերի դուրս բերումը պաշարված Տիգրանակերտից, նկարիչ՝ Ջ. Ֆուզարո

Դաս 27-28 Արտաշեսյան Հայաստանի դիվանագիտական ձեռքբերումները: Արտավազդ II

Գիտեք, որ...

- *Հռոմեացի պատմիչ Տակիտոսը Արտավազդի նկատմամբ կատարած Անտոնիոսի ստոր արարքը բնութագրում է «անբարո վերաբերմունք հայոց Արտավազդի նկատմամբ»:*

- *Պարթև արքա Օրոդես II-ը լսելով Կրասոսի գլուխն իր ձեռքում բռնած դերասան Յասոնի արտասանած խոսքերը, ուրախացած նրան պարգև է տալիս մեկ տաղանդ:*

- *Մեզ են հասել Արտաշատի դրամատանը հարած Արտավազդ II-ի գեղեցիկ արծաթյա դրամները, որոնց առաջին երեսին դրոշմված է արքայական թագով նրա պատկերը, իսկ երկրորդ երեսին՝ քառաձի ռազմակառք: Դրամների վրա հունարենով Արտավազդն իրեն անվանում է «արքայից արքա»:*

- *Ի պատիվ թագավորական կոչմանը, Անտոնիոսն Արտավազդ II-ին շղթայում է արծաթե շղթաներով, որոնք հետագայում Եգիպտոսում փոխարինվում են ոսկյա շղթաներով:*

Լրացուցիչ նյութեր

Արտավազդ II-ի պատասխանը

Ք.ծ.ա. 31 թ. Ակցիումի ճակատամարտից մի քանի օր առաջ Ալեքսանդրիա քաղաքի հանցանաց խուց է մտնում Կլեոպատրայի և Անտոնիոսի հավատարմատարը: Դիմելով մահվան դատապարտված Մեծ Հայքի արքայից արքա Արտավազդին՝ ասում է.

Արքայից արքա, առավոտյան դահիճը կգլխատի քեզ:

Գիտեմ,– հանգիստ պատասխանում է Արտավազդը:

Դու կարող ես փրկվել մահից:

Ինչպե՞ս

Համաձայնիր համբուրել Կլեոպատրայի շրջազգեստի քղանցքը և քեզ ազատություն կշնորհեն:

Չեմ կարող:

Ինչո՞ւ չես կարող:

Որովհետև կաշիս փրկելու և մորթապաշտի անուն վաստակելու փոխարեն ես պարտավոր եմ իմ հետնորդներին ժառանգություն թողնել հայոց հպարտությունը, վեհանձնությունը և արժանապատվությունը:

Թագուհու սերը

Հայոց Արտավազդ II արքայի կնոջ անունը մեզ չի հասել: Ասքն ասում է, որ նա արտակարգ գեղեցկության տեր է եղել: Նրա գեղեցկությունը շարժել է Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի նախանձը: Հին աշխարհի այս բռնակալուհին, մի անգամ դիմել է Եգիպտոս գերեվարված Արտավազդին և հարցրել.

– Հայոց արքա, դու կարո՞ղ ես ասել, թե ով է այս աշխարհի ամենագեղեցիկ կինը:

– Կինս,– պատասխանում է Արտավազդը:

Գուցե այդ մի հատիկ բառն է եղել պատճառը, որ Կլեոպատրան հրամայել է գլխատել Արտավազդին: Հավանաբար Արտավազդը Արա Գեղեցիկի նման շատ է սիրել իր կնոջը և տիկնունի (հարեմ) չի ունեցել, ինչպես իր ժամանակի տիրակալները: Գուցե Արտավազդին է պատկանում հայոց հնամենի առածներից մեկը. «Բոլոր տիկնունիները հրո ճարակ են դարձել մեծ սիրո բոցերից»:

Արտավազդի ժամանումը Եգիպտոս, նկարիչ՝ Ալ. Գրիգորյան

Դաս 29

Հայկական թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե)

Գիտեք, որ...

- *Հայոց թագավորներից առաջինը Ծոփքի թագավորներն են իրենց անուններով սեփական դրամներ հատել:*
- *Արտաշես I-ը Կապադովկիայի թագավորին առաջարկել է մեջտեղից վերացնել Ծոփքի գահի հավակնորդ երկու եղբորը և երկիրը բաժանել Կապադովկիայի ու Մեծ Հայքի միջև:*
- *Դեռևս Ք.ծ.ա. II հազարամյակում՝ Վանի թագավորության ժամանակ, Կոմմագենեն եղել է փոքրիկ թագավորություն՝ Կումախա, Կումմուխ անվանումներով:*
- *Կոմմագենեն ունեցել է հատուկ մշակված օրենսդրություն: Բազմաթիվ օրենքներ արձանագրված են Նեմրութում և թագավորության այլ կենտրոններում:*

Լրացուցիչ նյութեր

Սամոսի հրամանը

Ծոփք-Կոմմագենեի թագավորության հիմնադիր Սամոսը հրովարտակ է արձակում, ըստ որի Սամոսատ մայրաքաղաքի քառասուն արհեստավորաց տները պետք է ամեն տարի պատրաստեն յոթ հազար ջրի պղնձե կուժ և յոթ հազար ձիու սանձ: Սամոսն ասում էր, թե կժերը՝ աղջիկների, սանձերը ձիերի համար են:

Մի անգամ արհեստավորաց տան գործավորներից մեկը Սամոսին ասում է.

Տեր արքա, Սամոսատում, նույնիսկ ամբողջ Ծոփք-Կոմմագենեում տարեկան ոչ յոթ հազար աղջիկ է ծնվում և ոչ էլ յոթ հազար տղա, իսկ մենք կուժ ու սանձ ենք պատրաստում, հա՛ պատրաստում, որոնք ձրի էլ չեն տանում:

– Դուք ձեր գործը շարունակեք, գործավո՛ր,– ասում է արքան,– մի օր ապրվածները վերևից կտեսնեն, որ մենք շատ ջրի կուժ ու ձիու սանձ ունենք և կօգնեն մեզ, որ հայ մայրերն ավելի շատ աղջիկներ ու տղաներ ծնեն:

Դաս 30 Արտաշեսյան թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, հասարակական կյանքը

Գիտեք, որ...

- *Հայոց արքաներն ունեին պատվավորիչողոներ: Արտաշես I-ը կրում էր «Բարեպաշտ», իսկ Տիգրան Մեծը՝ «աստված» պատվավորիչողոները:*

- *Մշակ բառը նշանակում է հողի մշակությամբ զբաղվող մարդ, հողագործ, սակայն հնում այն ընկալվում էր որպես ուրիշի հողը մշակող հողագործ:*

- *Տաճարներն ունեին մեծ քանակությամբ ստրուկ-մշակներ: Մ. Խորենացին հաղորդում է, որ Արտաշես թագավորի զորավար Սմբատը որպես նվեր ստանալով քրմապետ Երվազի 500 ծառա-ստրուկ, տանում բնակեցնում է նրանց Մասիսի թիկունքին իր հիմնադրած դաստակերտում:*

Լրացուցիչ նյութեր

Հին սովորություն

Երկնային լույսի բարձր աստվածությունն ուներ Վահ կամ Վահե անունը, որից ծագում է Վահագն աստվածը՝ որպես Արեգակն աստծո հոմանիշ: Մինչև նախորդ դարը Վանի գյուղերի բնակչության մեջ պահպանվել էր մի գեղեցիկ արևապաշտական ծես. նորահարսին ու փեսային վաղ առավոտյան արևածագին, հանում են տան տանիքը, երբեմն գալիս է նաև քահանան: Նորապսակների երեսները դարձնում են դեպի արևելք, իսկ հանդիսականները երգում են:

Էգ (Այգ), բարև, ա՛յ էգ, բարև
Էգն արևուն տանք բարև
Տա թագավորին շատ արև,
Վահե՜, Վահե՜:

Առանց արևի կյանք չկա աշխարհում, և արևը հայ ժողովրդի գիտակցության մեջ կյանք հասկացողության նույնանիշն է դառնում, ուստի և երդվում են արևով, իրար արև, արևշատություն են ցանկանում: Դեռ Քսենոփոնն էր հայտնում, որ իր ձին տվել է հայ տանուտերին՝ Արեգակին զոհելու:

Դաս 31 Արտաշեսյան թագավորության թուլացումը և անկումը

Գիտեք, որ...

- *Էրատո թագուհին իր եղբայր Տիգրան IV-ի կինն էր: Եղբոր ու քրոջ ամուսնությունն ընդունված երևույթ էր հելլենիստական երկրների միապետների ընտանիքներում:*

- *Օգոստոս Օկտավիանոսի՝ «Հայաստանը նվաճված» մակագրությամբ հատված դրամների վրա Հայաստանը պատկերված է կնոջ կերպարանքով, որը կամ ծնկաչոք է Օգոստոսի առջև, կամ թևերը տարածած է դեպի նա, կարծես ամեն ինչ տալիս է նրան:*

- *Տիգրան IV-ի և Էրատո թագուհու անունով մեզ է հասել մի գեղեցիկ դրամ, որն այժմ պահվում է Փարիզի ազգային թանգարանում:*

- *Հռոմից կախում ունեցող հայոց թագավորները կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը:*

Լրացուցիչ նյութեր

Ջուրը մաքրում է օտարության փոշին

Հռոմից հայրենիք վերադառնալուց և հայոց գահին բազմելուց հետո Տիգրան III-ի առաջին գործն այն եղավ, որ շրջագայեց Հայաստանի այն մասերում, ուր ջրվեժներ կան և լողացավ այդ ջրվեժների տակ:

Արքայից արքա՛, ջրվեժների տակ լողանալը, կարծես, սրբազան արարողություն է քեզ համար,- հարցրեց մի օր տերության սպարապետը:

Այո՛, սպարապե՛տ, հայկական ջրով լողանալով ես ինձնից մաքրում եմ օտարության փոշին, հռոմեական սովորությունները և վերստանում հայկականը, հայրենականը, իմ նախնյաց ոգին:

Դաս 32 Հելլենիստական դարաշրջանը Հայաստանում: Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Արտաշեսյանների օրոք

Գիտեք, որ...

- *Գառնիի հին դամբարաններից մեկում գտնվել է ոսկրից պատրաստված մի սրինգ, որը մեզ հասած ամենահին երաժշտական գործիքն է:*
- *Հունարեն «միմոս» բառը հին հայերենով թարգմանվել է գուսան:*
- *Քրիստոնեական ավանդության համաձայն, Վարդավառի տոնը կապված է համաշխարհային ջրհեղեղի հետ, իսկ Ասպղիկը՝ Նոյի դուստրն է:*
- *Պետական փաստաթղթերը, նախքան հրապարակվելը, կազմվում էին արքունի գրասենյակում, պապիրուսի կամ մագաղաթի վրա, որից հետո տեքստը փոխադրվում էր քարի վրա:*
- *Արտաշատ մայրաքաղաքը թողարկել է իր դրամները, որոնց մի երեսին պատկերված էր մայրաքաղաքի հովանավոր Անահիտ աստվածուհին, իսկ մյուսին՝ հաղթանակի թևավոր դիցուհին: Դրամի շրջագծում հունարեն գրված էր «Արտաշատ» մայրաքաղաք:*

Լրացուցիչ նյութեր

Ցորեն քարի վրա

Քարաշատ Հայաստանի մարդիկ գնացին բերրիության, մայրության և արգասավորության աստվածուհի Անահիտի մոտ և բողոքեցին.

Տառապում ենք մի կտոր հաց ստանալու համար, էլ ուժ չունենք: Դու բերրիության աստվածուհին ես, գթա մեզ, մեր դաշտերն ու հովիտներն ազատիր ժայռ ու քարից և հողը դարձրու բարեբեր:

Քարքարոտներից ստացած բարիքն ավելի քաղցր է,– ասաց Անահիտը:

Մարդիկ չհամաձայնեցին աստվածուհու հետ և շարունակեցին տրտնջալ իրենց բախտից: Անահիտը ստիպված էր հրաժարվել իր մի սրունքից և այն նետել Բագրևանդ: Մարդիկ գնացին Բագրևանդ և տեսան Արածանի գետի ափին ընկած

քարե մի սրունք: Ջարմացան: Մի՞թե քարից է նաև աստվածուհու ոտքը: Հետո ցավից պառապող Անահիտի ճակատից քրտինքի կաթիլներ ընկան քարե սրունքի վրա: Սրունքը բեկվեց և երևացին ցորենի մի քանի հուռթի հասկեր: Այ քեզ բա՜ն, այս ինչպես եղավ, որ քարի վրա ցորեն աճեց: Հայերը խնդրեցին Վրույր իմաստունին, որ նա մեկնի այդ հրաշքը: Եվ Վրույրն ասաց.

Քրտինքով պիտի բարեբեր դարձնենք մեր քարքարոտ երկիրը: Քրտինք թափելով ու աշխատելով կարելի է ցորեն աճեցնել նաև ժայռի վրա:

Արտաշես և Սաթենիկ, նկարիչ՝ Ջ. Ֆուզարո